ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐԻԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
Էլ. հասցե՝ marina–arutunyan@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 10.04.2021,
գրախոսվել է 10.04.2021,
ընդունվել է տպագրության 20.04.2021

ՇՈՒՇԻՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԻՑ ՓՐԿՎԱԾ՝ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ԵՎ XIX ԴԱՐԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ներածական

Հայ գրչության արվեստի ձևավորմանն ու զարգացմանը նվիրված են բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ:

Արցախի գրչագրության արժեքային համակարգի ուսումնասիրության հարցում կարևորվում են Սարգիս արքեպս. Հասան-Ջալալյանցի[1], Մակար եպս. Բարխուդարյանցի[2], Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի[3], Յովհաննես եպս. Շահխաթունյանցի[4], Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանի[5], Գարեգին Հովսեփյանի[6], Խաչիկ Դաղյանի[7], Օ. Եգանյանի[8] և ուրիշների ձեռագրական հավաքածուների դերն ու նշանակությունը:

Սակայն ինչպես վերոնշյալ գիտական հետազոտություններում, այնպես էլ ժամանակակից գրականության մեջ քիչ տեղեկություններ կան Շուշիի ձեռագրական մշակույթի, հատկապես վերջինիս մշակութային արժեքների ոչնչացումից փրկված՝ XVIII դարի վերջի և XIX դարի ձեռագրերի վերաբերյալ: Այս հրապարակումը նպատակ ունի լրացնելու Շուշիի ձեռագրական մշակույթի պատմության ուսումնասի-

---

[1] Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 228, վավ. 15:
[2] Բարխուտարեանց Մ. 1895:
[3] Սբատեանց Մ. 1904:
[4] Շահխաթունեանց Յովհ. եպիսկ. 1842:
[5] Կարապետ եպիսկոպոս 1914:
[6] Հովսեփեան Գ. 1951:
[7] Թօփճեան Յ. 1898:
[8] Եգանեան Օ., Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն, էջ 59-62:

ության բաց թողնված էջերը:

Գրչության արվեստը (նաև՝ գրչագրություն) պատմական Հայաստանում ստեղծվել էր դեռևս հնագույն ժամանակաշրջանում՝ փորագրությունների տեսքով: Արվեստի այս տեսակը լայնորեն կիրառվել է միջնադարում: Արցախում նշանավոր էին Դադիվանքի (նաև՝ Դադոյի), Ամարասի, Գանձասարի[1], Գտչավանքի (հնում՝ Քթիշ, հետագայում՝ Կտիչ, Գտիչ, իսկ նոր ժամանակներում մելիքանիստ Տող գյուղի անունով՝ Տող), Խանածախի, Ավետարանոցի, Խզնավար գյուղի, Չարեքա վանքի, Փառիսոսի վանքի, Երից մանկանց վանքի, Ծարա գավառի, Սբ. Հակոբա վանքի[2], Եղիշե առաքյալի վանքի, Առաջաձոր գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու (ներկայիս Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջան), Հիրհերի (Հերհերի), ինչպես նաև Արցախի հյուսիսարևելյան հատվածի մի շարք վայրերի գրչագրության կենտրոնները:

Շուշիում[3] ձեռագրական մշակույթը լայն թափ ստացավ XVIII դարի երկրորդ կեսից: Սակայն ցավով նշենք, որ ինչպես Արևելյան Հայաստանի մյուս շրջաններում, այնպես էլ Արցախում գրված և ընդօրինակված հայկական ձեռագրերից քչերի հանդեպ է բարեհաճ գտնվել պատմական ճակատագիրը: Խնդիրն այն է, որ դեռևս միջնադարում Հայաստանում վաչկատուն ցեղերը (սելջուկ-թուրքեր, թաթար-մոնղոլներ, Լանկ-Թեմուրի արյունարբու հրոսակախմբեր) անխնա ոչնչացնում էին մշակութային արժեքները, նախ և առաջ ձեռագրերը, գորգերը, հայկական եկեղեցիները, իսկ ոսկյա և արծաթյա թանկարժեք զարդերը, կենցաղային իրերը՝ հափշտակում: Նույն դաժանությամբ էին վարվում նաև կովկասյան թաթարները: Պետք է նշել, որ այս վաչկատուն ցեղերը, որոնք մինչև XX դարի սկիզբը ազգային ինքնության գիտակցություն չունեին և իրենց ուրիշներից՝ մասնավորապես քրիստոնյաներից, տարբերում էին «մուսուլման» ընդհանրական անվանումով, այսպես կոչված «ադրբեջանցի» տիտղոսը ամրագրեցին XX դ. սկզբին: Փաստորեն, Թուրքիայի քաղաքական նոր նկրտումների և ճնշումների տակ, թուրքական բանակի ինտերվենցիայի հետևանքով 1918 թ. ստեղծվում է կովկասյան թաթարների, այսպես կոչված, ադրբեջանական պետությունը. նավթաշատ Բաքուն հռչակվում է պետության մայրաքաղաքը, որի կառուցմանը, ինչպես նաև նրա արդյունաբերական և մշակութային զարգացմանը «ադրբեջանցիներն» ամենևին չեն մասնակցել:

«Ադրբեջանցիները» տասնամյակներ շարունակ Նախիջևանում, Արցախում (Լեռնային, Դաշտային) և Բաքվում հայկական կոտորածներին զուգահեռ մշակութային արժեքների ոչնչացման քաղաքականություն էին իրականացրել: Նրանք նպատակասլաց հայաթափել էին Նախիջևանը և Դաշտային Արցախ-Գարդման-

[1] Տարբեր դարաշրջաններում Գանձասարում գրված ձեռագրերի, ինչպես նաև վանքում եղած իրերի, տապանաքարերի վերաբերյալ որոշ արժեքավոր տեղեկություններ կան ԳԱԹ-ում (ֆոնդ Ս. Քամալյանի, g. 2, բաժին 44):

[2] Բարխուտարեանց Մ. 1996, 109:

[3] Շուշի բերդաքաղաքի հիմնադրման և բնակեցման ճշգրիտ տարեթվի մասին տարբեր կարծիքներ կան գիտական գրականության մեջ: Ընդհանրապես, հետազոտողների մի մասը (հատկապես՝ օտար ուսումնասիրողները) Շուշիի հիմնադրումը համարում են XVIII դարի հիսունական թվականները: Սակայն նշենք, որ այն որպես բնակավայր-ամրոց գոյություն է ունեցել դեռևս ավելի վաղ ժամանակներում (Բալայան Վ. 2017, 38): 1846 թ. Շուշի ամրոցը վերանվանվել է Շուշի քաղաք (Աբրահամյան Հ., Շուշիի ինքնավարության հարցի շուրջ, էջ 4: Աբրահամյան Հ. 2015):

քը, աստիճանաբար ոչնչացրել հայկական մշակութային արժեքները, բարբարոսաբար բնաջնջել Ջուղայի խաչքարերը, իսկ թուրքերը տարիներով մշակութային ցեղասպանություն են իրականացրել Արևմտյան Հայաստանում: Այս մասին վկայում են բազմաթիվ փաստեր՝ փաստավավերագրական ժողովածուներում, հուշագրություններում, գիտական հետազոտություններում, պատմագրական և մատենագիտական աշխատություններում, որոնք ներկայացված են:

Արցախի, հատկապես նրա մշակութային կենտրոն Շուշիի համար 1918-1920 թվականները համարվում են առավել ծանր իրադարձություններով լի ժամանակաշրջան[1], քանի որ այս տարիներին էր, որ Ադրբեջանի նորաթուխ մուսավաթական կառավարությունը հավակնում էր բռնազավթել պատմական Հայաստանի մի շարք տարածքներ, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղը: Ինչպես նշում է պ.գ.դ. Համլետ Հարությունյանը, արևելահայության վիճակն ավելի ծանրացավ, երբ Արևելյան Հայաստանի Շուշու, Զանգեզուրի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի գավառների գեներալ-նահանգապետ հռչակված (Ադրբեջանի կառավարության 1919 թ. հունվարի 15-ի որոշումով) Խոսրով բեկ Սուլթանովը դիվանագիտական ճնշումներով, սպառնալիքներով, զինված ուժ գործադրելով ցանկանում էր արցախահայությունից կորզել Ադրբեջանին հպատակվելու համաձայնություն: Սակայն արցախցիների պատասխանը անփոփոխ էր ու հստակ. ո՛չ Ադրբեջանի իշխանությանը[2]: Չկարողանալով հաշտվել այս իրողության հետ՝ Ադրբեջանը շարունակում էր բոլոր միջոցներով սպառնալ գավառի հայության ֆիզիկական գոյությանը: Ադրբեջանական զինված ուժերի լայնամասշտաբ հարձակումները սկսվեցին 1920 թ. մարտի 22-ի երեկոյան: Լույս 23 -ի գիշերը թուրքական կանոնավոր զորամասերը և խուժանը սկսեցին ավերել ու վառել հայկական թաղամասերի շինությունները, մշակութային հուշարձանները, կողոպտեցին հայերին, կազմակերպեցին ու իրականացրին արյունալի ջարդեր: Չնայած ինքնապաշտպանական մարտերին՝ Շուշիում հայերն ունեցան ինչպես մարդկային[3], այնպես էլ մշակութային արժեքների զգալի կորուստներ: Շուշիում ավերվեցին հայկական դպրոցները (թեմական դպրոցը[4], մասնավոր, հասարակական դպրոցներ), Բագրատ Տեր-Սահակյանի և Մելքոն Բաբաջանյանի տպարանները (որոնց գործունեությունն ընդհատվեց 1920 թ. մարտի 23-ին), պատմամշակութային[5] հուշարձանները (եկեղեցիներ, խաչքարեր, մշակութային օջախներ):

Չնայած «ադրբեջանցիների» կողմից իրականացված՝ մշակութային արժեքների ոչնչացմանը, հայ մշակույթի անխոնջ ներկայացուցիչների ջանքերի շնորհիվ փրկվել և մեզ են հասել մի քանի ձեռագրեր, որոնք պահվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և Էջմիածնի ձեռագրատանը:

Մեր գիտական ուսումնասիրության մեջ շեշտը հիմնականում դրել ենք XVIII դարի վերջին և XIX դարում գրված ձեռագրերի վրա.

---

[1] Բալայան Վ. 2017, 423:
[2] Հարությունյան Հ., Շուշիի հայության կոտորածները (1919 թ. հունիս և 1920 թ. մարտ), էջ 50-51:
[3] Միքայէլեան Ա., Ղարաբաղի վերջին դեպքերը, էջ 121-122:
[4] ԼԷօ 1914:
[5] Հարությունյան Մ. Գ. 2010:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐ
ՁԵՌԱԳԻՐ Հմր 7428
ԺՈՂՈՎԱԾՈՒ
(ԲԺՇԿԱՐԱՆ)

ՎԱՅՐ՝ Շուշի բերդ, 1791-1792 թ.: **ԳՐԻՉ՝** Միքայէլ Աստապատեցի: **ԹԵՐԹ՝** 154: **ՆՅՈՒԹ՝** թուղթ: **ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝** 33,2 X 21,2: **ԳՐՈՒԹՅՈՒՆ՝** երկսիւն: **ԳԻՐ՝** բոլորգիր: **ՏՈՂ՝** 37-40: **ԿԱԶՄ՝** ստվարաթուղթ: **Հշտկրն. գրչի՝** էջ 4 ա, 72ա, 103ա: **ՎԻՃԱԿԸ՝** լավ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - «Միքայէլ Աստապատեցւոյ Տոմար բժշկութեան, Բժշկարան»: - «Աչից դեղ խիստ ազնիւ»[1]: «Վասն ստամոքն այտոցի»[2]: «Վասն լերդացաւ»[3] : «Վասն գլխացաւին»[4]: «Աչացաւ»[5]:

«Տոմարական աղիւսակ»[6] :

«Վասն ականջի ցաւերին» - «Ականջն որ խլանաց, կամ ջուր երբայ մնաց մէջն և չի լսէ, առ գլուխ սխտոր ծեծե, գդալ քացախ և գդալ ջուր և ապակէ մէջ եփես, քամէ պարզ ջուրն շիշի մէջ ածէ յետոյ քիչ-քիչ քսել....»[7]:

«Վասն բերանի խոցերին»[8]:

«Օձն որ մարդն խայթէ» - «....թթու բան լից վրայն խնձորի տերևն ծեծէ կապէ վրայն նաև ծեծած տերևն խնձորի և ջուրն հան խառնէ գինին և տուր խմէ. օձահարի և այլ գազանհարի շատվարն (խառնուրդ) լաւէ և փորձաց...օձն որ մարդոյ բերանն կշտում չի լաւանայ, բողկն ծեծէ ջուրն խառնէ զաֆրանն և խմել տուր....»[9]:

«Հապ փորացաւի»[10] : «Սպեղանիք զանազան կազմեալ, օրինակէ»[11] : «Հապ հազի»[12] :

«Թուական Սարկաւագի»[13] : «Տոմարական գործիք»[14] (Լուսնացոյց) :

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ - «Տօմար բժշկութե արարեալ վաղեմի իմաստնոց..... ձեռամբ յօգնամեղ Միքայէլ քահանայի.... օգնեա Սբ Հոգի Աստուած իմ»[15] :

«Բժշկարան գիրք արարեալ վաղեմի ժամանակաց իւր այբուբեն գրոցն օրինակ է՝ ձեռամբ Տէր Միքայէլէ Աստապատեցւոց Շուշի բերդն ՍՄԽԱ թուին»[16]:

«Տէր Միքայէլ գրողս յիշեա ՍՄԽԱ թուին Շուշու բերդս»[17] :

---

[1] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 4ա:
[2] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 15ա:
[3] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 17ա:
[4] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 30ա:
[5] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 42ա:
[6] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 61ա-71բ, 77բ, 123բ -124բ, 151ա-152ա:
[7] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 73բ:
[8] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 74ա:
[9] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 95ա:
[10] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 103բ:
[11] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 107բ:
[12] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 117բ:
[13] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 125ա-126բ:
[14] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 127ա:
[15] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 4ա:
[16] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 72ա:
[17] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 103ա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ - Ձեռագրում ուշագրավ է «Լուսնացոյց» -ը: Այն ներկայացված է աղյուսակներով, որոնցում գրված են տարեթվերը՝ սկսած 1774 թ. մինչև 1912 թ.: Տարեթվերին զուգահեռ նշված են ամիսները՝ ըստ համաստեղությունների(խոյ, ցուլ, երկվորյակ, խեցգետին, առյուծ, կույս և այլն)[1] : Որոշ աղյուսակներում կան հայոց տարեթվերի վերծանություն[2]:

ՁԵՌԱԳԻՐ Հմր 8212

ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՎԱՅՐ՝ Շուշի, 1822 թ.: **ԳՐԻՉ ՝** Մեսրովբ Թաղիադեանց:
ՍՏԱՑՈՂ՝ Աղա Կարապետ: **ԹԵՐԹ՝** 123: **ՆՅՈՒԹ՝** թուղթ:
ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 21 X 17,2: **ԳՐՈՒԹՅՈՒՆ՝** միասիւն: **ԳԻՐ՝** նոտրգիր: **ՏՈՂ՝** 20-29: **ԿԱՋՄ՝** կտդ: **Հշտկրն. գրչի՝** էջ 6 ա, 77բ: 1-5, 79-81, 120-123 էջերը ՝ չգրված: **ՎԻՃԱԿԸ՝** բավարար, կազմի Ա փեղկի արտաքին եզրի կաշին քերծուած-մաշուած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - «Գիրք որ կոչի Աստուածանմանութիւն» (էջ 6ա): «Յառաջաբանուի հեղինակի»[3] :

Ա) «Գլուխ նախընթաց, յաղագս թէ որքան մեծ իցէ ճանաչելն զԱստուած»[4] :

Բ)«Գլուխ նախընթաց յաղագս թէ որքան մեծ իցէ ճանաչելն զԱստուած»[5]:

Գ) «Եզրակացուի»[6] :

Դ) «Նմանութիւն»[7]:

Ե) «Յաղագս թէ Աստուած է գոյացական էակ և նմանուի»[8] :

Զ) «Յաղագս թէ Աստուած է կենդանի էակ» - «....թէ Աստուած իցէ կենդանի, բայց զի կարգ բանին այսպէս պահանջե վասն այն ցուցանելի է նախ վկայութեամբ Սբ գրոց....»[9] :

Է) «Յաղագս թէ Աստուած է իմացական էակ» - «....իմացական գոլն ցուցանի նախ վկայութեամբ Սբ գրոց, զի ասէ յոր իմաստուն է մտօք, զօրաւոր և մեծ, և իմաստունն ասէ գոյ 'ի նմա հոգի մտաւոր .... Սբ Միածին....»[10] :

Ը)«Յաղագս թէ Աստուած է անձնիշխան էակ» - «Սոյն է ասել թէ Աստուած է անձնիշխան, քանզի անձնիշխան անուին ոչ այլ ինչ է, թէ ոչ կամք ազատ: Ապա 'ի ցուցանելն թէ կամքն է 'ի Աստուած, միանգամայն ցուցանի և անձնիշխանութիւն....»[11] **Թ)**«Յաղագս թէ Աստուած է ճշմարիտ էակ»[12]:

Ժ) «Յաղագս թէ Աստուած է ամենաբարի էակ»[13] :

---

[1] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 127ա-127բ, 153բ - 154ա:
[2] ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 138ա-139ա, 142ա -148ա:
[3] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 7ա:
[4] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 7 բ:
[5] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 7 բ:
[6] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 10ա:
[7] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 16բ:
[8] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 19ա:
[9] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 21ա:
[10] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 22ա:
[11] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 22 բ:
[12] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 23բ:
[13] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 24բ:

Ի) «Յաղագս թէ Աստուած է մի միայն»[1] :

Լ) «Յաղագս նմանուի, որ արտահանի 'ի ճանաչման է Սրբոյ Երրորդութեան»[2]: «Տէր՝ ի թուականիս Հայոց»[3] :

«Փիլիպպոսի Համառօտ մեկնութիւն ոմանց բանից եղելոց ի Տրամաբանութեանն Անտոնի Գովդնոյ»[4] :

Ա) «Եզրք», «Պարզ նախադասութեանց ոմանց առաջին ընտերակայի»[5]:

Բ) «Օրէնք Աստուածային....»[6]:

Գ) «Կանօնք ներգործուի»[7]:

Դ) «Որպես բաղձանք բարոյական առաքինութեան»[8] :

Ե) «Զինչէ հաւասարեալ և անհաւասար սահմանն»[9]:

Զ) «Զինչէ տեսականուին գործնականի և տեսականի»[10]:

Է) «Զինչէ գործողական հաւաքաբանուին, որոյ մեծագոյն և այլն», «Զինչէ, որ ասէ, թէ ապացուցուիք այլոց»[11]:

Ը) «Արդ մարդկուի և կենդանուի նշանակել են....»[12]:

Թ) «Վասն գոյացուի»[13] :

Ժ) «Զինչէ, որ ասէ գոյացուի առանց քանակուե և այլն»[14] :

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ - «Եւ այժմ արտագրեալ զգուշութեամբ 'ի նախկին գաղափարե անտի 'ի նորին իսկ ձեռագրէ աշխատասիրութեամբ նուաստ Մեսրովպայ սարկաւագի Կարբեցւոյ միաբան Թաղիադեանց, որ պաշտօնատար հարազատ եւ ծառայ՝ Յովհաննէս խորհրդական գրագիր Արքեպիսկոպոսի Տարօնացւոյ: 'Ի հայրապետութեան տեառն Եփրեմայ Սրբազան կաթողիկոսին Ամենայն Հայոց, յամի 1822, փետրուարի 19, 'ի Շուշի քաղաքի, որի վիճակայ Արցախու»[15] :

«....զայս գիրք .... իբրև զբոլորեալ փունջս ծաղկանց ընծայեցի Աղայ Կարապետ գերազնիւ իմաստասիրի եւ այն՝ ոչ վասն մարմնոյ բարե ցանկութեան, այլ յաղագս զբարեկամուին .... Խոնարհ ծառայ գերազնիւ ձեռամբ Մեսրովբ սարկաւագ Կարբեցի Դաւթայ Թաղիադեանց»[16]:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ ՁԵՌԱԳՐԵՐ

ՁԵՌԱԳԻՐ Հմր 166
ԱՒԵՏԱՐԱՆ

---

[1] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 26ա:
[2] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 57ա:
[3] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 78 ա:
[4] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 82ա:
[5] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 82բ:
[6] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 83 ա:
[7] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 89 ա:
[8] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 89բ:
[9] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 92բ:
[10] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 93բ:
[11] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 95ա:
[12] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 103ա:
[13] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 106ա:
[14] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 106բ:
[15] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 6ա:
[16] ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 77բ:

ՎԱՅՐ՝ Շուշի, 1867-72թթ.: **ԳՐԻՉ, ԾԱՂԿՈՂ՝** Մարգարիտ Ալեքսանեանց:
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ անհայտ: **ԹԵՐԹ՝** 241: **ՊՐԱԿՆԵՐ՝** 50: **ՆՅՈՒԹ՝** թուղթ:
ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 34,6 X 24,5: **ԳՐՈՒԹՅՈՒՆ՝** երկսիւն: **ԳԻՐ՝** բոլորգիր:
ՏՈՂ՝ 31: **Մնրնկր՝** ավետարանիչ, կխ, լզ: **ԶԱՐԴԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ՝** թռչնագիր, կենդանագիր: **ՊԱՀՊԱՆԱԿ՝** 1+1, թուղթ: **ԿԱԶՄ՝** արծաթապատ տախտակ: **Հշտկրն. գրչի՝** էջ 3ա: **ՎԻՃԱԿԸ՝** լավ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - *‹‹Աւետարան ըստ* Մատթէոսի››: *‹‹Աւետարան ըստ Մարկոսի››* ‹‹Աւետարան ըստ Ղուկասու››: ‹‹Աւետարան ըստ Յոհաննու››:

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ - Մանրանկարներն աչքի են ընկնում մեծ նրբաճաշակությամբ: ‹‹Աւետարան››-ի յուրաքանչյուր գլուխ սկսվում է գլխատառերով, որոնց գրվածքը ներկայացվել է զանազան կենդանիների կամ ձկների, երբեմն՝ նուրբ ծաղիկների պատկերներով: Որոշ գլխագրեր գրված են երեք լեզվով՝ հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն: Ձեռագրի սկզբում պատկերված են չորս ավետարանիչները: Աշխատանքում կան կիսախորաններ[1] և լուսանցազարդեր: Հետաքրքիր է Սբ. Գրիգոր Նարեկացու մանրանկարը, որում նրա հայացքն ուղղված է դեպի երկինք՝ ամպերի մեջ երևացող մանուկը գրկած Տիրամորը[2]: Ուշագրավ են Շուշի քաղաքի հայոց թաղամասի[3], Մայր Աթոռ Սբ . էջմիածնի մանրանկարները[4]:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ - «Հոգին Սուրբ եկեսցէ: Սուրբ Աւետարան Յիսուսի Քրիստոսի: Ձեռագրեաց Մարգարիտ Ալէքսանեաց, ի Շուշի, յամի 1872(ՌՑԻԱ)»[5]:

«Ձեռագրեաց Մարգարիտ դուստր Ղազանչեցի, այժմ Շուշի քաղաքացի, հանգուցեալ ազնուազարմ Ումբրի-բէյի Յովհանեան, ի կողմանէ ամուսնոյն Ալէքսանեանց, ի կասրութեան Ռուսաց Ալեքսանդր Բ, ի Հայրապետութեան Տ. Տ. Գէորգայ Դ Կաթողիկոսի Ամենայն Հայոց եւ յառաջնորդութեան հայոց Ղարաբաղու վիճակի Տեառն Սարգսի արքեպիսկոպոսի Ջալալեանց….»:

«Շնորհօք Սուրբ Հոգւոյն, ողորմութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ազդմամբ ամենակալին եւ ամենագթածին Աստուծոյ եւ պաշտելի բարեխօսութեամբ եւ պաշտպանութեամբ ամենասրբուհի Աստուածամօրն եւ Թագուհւոյն երկնի եւ երկրի, միակ Տիրամօր Կուսին Մարիամայ, ես մեղաւոր անարժան աղախին Մարգարիտս ի դստերացն Ումբրի-բէյի Յովհանեանց, ծնելոյ ի Շուշի քաղաքի, աշխարհին Արցախայ Մեծին Հայաստանի, սկիզբն արարի ձեռամբ իմով գծագրել զՍուրբ Աւետարանս, ի Փրկչական թուին 1867 և շնորհապարգև օժանդակութեամբ Սրբոյ Երրորդութեանն յաւարտ հասուցի աշխատելով կարի յոյժ վասն գեղեցկութեան մատենիս, յամի Տեառն 1872, ի տիս ամաց կենաց իմոց իբրև երեսնից: Նուիրեցի զայս ի դուռն Արարատեան Աստուածակառոյց Առաքելական Մայր Սուրբ Կաթողիկէ եկեղեցւոյն Սրբոյ Էջմիածնայ, ի փրկութիւն հոգւոց ծնողացն իմոց Ումբրի-բէյի եւ Հռիփսիմէին եւ եղբօրն իմոյ Յովհանիսին …. ի փրկութիւն հոգւոյս տառապեալ աղախին Մարգարիտս եւ ամուսնոյս Պետ-

[1] Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. Հ՝ 166, թ. 3ա, 15ա, 120ա, 149ա:
[2] Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. Հ՝ 166, թ. 10 բ , 50 ա , 76 բ, 117 ա:
[3] Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. Հ՝ 166, թ. 10 ա:
[4] Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. Հ՝ 166, թ. 149 բ:
[5] Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. Հ՝ 166, թ. 3ա:

րոսի Ալէքսանեանց»:

ԿԱԶՄ - Ձեռագրի կազմը արծաթապատ է, որի վրա փորագրված են գեղեցիկ, մանր քանդակներ: Առաջին երեսին՝ ձվաձև շրջանակի մեջ, փորագրված է Հիսուս Քրիստոսի բարձրաքանդակ մանրանկարը: Նա պատկերված է գահի վրա նստած դիրքով՝ Ավետարանը ձախ ձեռքին: Կազմի նույն երեսի չորս անկյուններում՝ կլոր շրջանակների մեջ, փորագրված են չորս ավետարանիչները, որոնց յուրաքանչյուրի ձեռքին կա մեկական Ավետարան: Շրջանակներից դուրս առկա են գեղեցիկ զարդաքանդակներ: Կազմի երկրորդ երեսի կենտրոնում՝ ձվաձև շրջանակի մեջ, առկա է ինքնատիպ բարձրաքանդակ, որում պատկերված են նորածին Հիսուսը, Մարիամ Աստվածածինը, Հովսեփը և երկու հրեշտակներ: Առկա են նաև այլ գեղեցիկ զարդաքանդակներ[1]:

ՁԵՌԱԳԻՐ Հմր 186
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՏԵԱՆ
(հայատառ պարսկերեն)

ՎԱՅՐ՝ Շուշի, 1809թ.: **ԳՐԻՉ՝** գրիչ՝ Ալի բեգ Վալիֆ:
ԹԵՐԹ՝ 137: **ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝** 35,5 X 22: **ՆՅՈՒԹ՝** թուղթ:
ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ միասիւն: **ԳԻՐ՝** բոլորգիր: **ՏՈՂ՝** 14- 24:
ԿԱԶՄ՝ ստվարաթուղթ: **Վիճակը՝** անբավարար:
Հշտկրն. էջ 137 ա: **Հիշատակագրություն՝** էջ 76բ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - Ձեռագրում ներկայացվում են պարսկերենով արձանագրություններ՝ սոցիալական խնդիրների վերաբերյալ: Հիմնականում վերաբերում են կալվածքների, գյուղացիների անասունների հաշվառմանը:

ՁԵՌԱԳԻՐ Հմր 279
ԿՈՆԴԱԿ

ՎԱՅՐ՝ Շուշի, 1822 թ.: **ԳՐԻՉ՝ անհայտ: ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝** ԵՓՐԵՄ Ա ՁՈՐԱԳԵՂՑԻ : **ԾԱՂԿՈՂ՝** անհայտ: **ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝** 45,4 X 32,7: **ՆՅՈՒԹ՝** թուղթ: **ԳՐՈՒԹՅՈՒՆ՝** միասյուն: **ԳԻՐ՝** նոտրգիր: **ՏՈՂ՝** 36: **Մնրնկր՝** լգ.:
ՁԱՐԴԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ՝ թռչնագիր: **Վիճակը՝** բավարար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - « Յիսուսի Քրիստոսի ծառայ եւ շնորհի: Նորին Տէր Եփրեմ Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Ծայրագոյն Պատրիարգ Աստուածայնոյ եւ Առաքելականի եկեղեցւոյ Քրիստոսի, նաև Մեծի Մայր Աթոռոյն Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի ….. Շնորհք, սէր, ողորմութիւն, խաղաղութիւն եւ ամենաքաղցր ակնարկութիւն Սրբոյ Երրորդութեան հանդերձ սքանչելահրաշ զօրութեամբ քրիստոսամուխ Սրբոյ Գեղարդեանն եւ պահպանութեամբ Աջոյ Սրբոյ Լուսաւորչին եւ Սրբոյն Յակոբայ Մծբնայ Հայրապետին եւ այլ ամենայն Աստուածային Սրբու-

[1] ‹‹Էջմիածին›› 1962, N 12, էջ 57-59:

թեանց եւ Մասանց Սրբոց ի Մայր Աթոռն լուսոյ զետեղեալ գումարելոց ..... Գիտութիւն լիցի սիրելութեան ձերում, զի մեծաւ հաւատով եւ կատարելագոյն ջերմեռանդութեամբ առլցեայ թուղթ ձեր ժամանեաց առ մեզ հանդերձ ընծայիւք ձեռամբ արժնապատիւ Տէր Մկրտիչ պարկեշտակրօն քահանային Աւագով Խալիֆեանց: Արդարև վշտացաք յոյժ ընդ վշտակցութիւնս ձեր ի բազմութեան վնասարան մարախաց, ըստ սրբազան Առաքելոյն Պօղոսի թէ զիւանդանայ եւ ես ոչ հիւանդանամ եւ այլն: Բարի էր խնդիրն ձեր եւ հաճոյ կամաց մերոց, ըստ որում պտուղ մեծի հաւատոյ կատարեալ զղջման եւ ջերմեռանդութեան, զոր եւ արժան իսկ էր կատարել առանց զանցառութեան, առաքելով զսքանչելագործ Աջ Սրբազան Հայրապետին Յակոբայ թէ ի սէր սիրելի որդիութեան ձերոյ եւ թէ ի պատիւ յարգոյ Անտօն Արքեպիսկոպոս սիրելւոյ մերոյ եւ արժանապատիւ յաջորդ Խաչատուր վարդապետ եւ նստար Յոհաննէս վարդապետ խաչակիր սիրելի որդւոցն մերոց .... Որ եւ մենք մաղթենք յԱստուծոյ հեղուլ ի ձեզ առատապէս զշնորհ մեծի գթութեան եւ ողորմութեան իւրոյ եւ ուրախ առնել զձեզ զամենեսեան արագահաս օգնականութեամբ բարեխօսութեան Սրբոյն Յակոբայ Ամէն: Աղօթարար վասն ձեր յամենայն սրտէ վշտալի Եփրեմ. 1822, մայիս 2, ի Շուշի»[1]:

ՁԵՌԱԳԻՐ Հմր 657

ՎԱՅՐ՝ Շուշի, 1893թ.: **ԳՐԻՉ՝** Արշակ Տեր Միքայելյան[2]:

Եզրակացություն

Գրչության արվեստը (նաև՝ գրչագրություն) պատմական Հայաստանում ստեղծվել էր դեռևս հնագույն ժամանակաշրջանում՝ փորագրությունների տեսքով: Արվեստի այս տեսակը լայնորեն կիրառվել է միջնադարում: Շուշիում ձեռագրական մշակույթը լայն թափ ստացավ XVIII դարի երկրորդ կեսից: Սակայն ցավով նշենք, որ ինչպես Արևելյան Հայաստանի մյուս շրջաններում, այնպես էլ Արցախում գրված և ընդօրինակված հայկական ձեռագրերի որոշ մասն են հասել մեզ: Խնդիրն այն է, որ դեռևս միջնադարում Հայաստանում վաչկատուն ցեղերը (սելջուկ-թուրքեր, թաթար-մոնղոլներ, Լանկ-Թեմուրի արյունարբու հրոսակախմբեր) անխնա ոչնչացնում էին մշակութային արժեքները, նախ և առաջ ձեռագրերը, գորգերը, հայկական եկեղեցիները, իսկ ոսկյա և արծաթյա թանկարժեք զարդերը, կենցաղային իրերը՝ հափշտակում: Հետագայում նույն դաժանությամբ էին վարվում նաև կովկասյան թաթարները:

Ադրբեջանցիները տասնամյակներ շարունակ Նախիջևանում, Արցախում (Լեռնային, Դաշտային) և Բաքվում հայկական կոտորածներին զուգահեռ մշակութային արժեքների ոչնչացման քաղաքականություն էին իրականացրել: Սակայն հայ մշակույթի ներկայացուցիչների կողմից հաջողվել էր փրկել մշակութային որոշ արժեքներ, այդ թվում՝ ձեռագրեր:

---

[1] ‹‹Էջմիածին›› 1971, N 8, էջ 70:
[2] Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. Հմր 657:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Հ. 2015, Արցախը XVIII-XIX դարերում, Երևան, ‹‹Հեղ. հրատ››, 420 էջ:
2. Բարխուտարեանց Մ. 1895, Արցախ, Բաքու, «Արօր», 460 էջ:
3. Բարխուտարեանց Մ. 1996, Արցախ, Երևան, «Ամարաս», 300 էջ:
4. Բալայան Վ. 2017, Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, «Զանգակ» հրատ., 560 էջ, 32 էջ ներդիր:
5. Թօփճեան Յ. 1898, Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ վարդապետի, ժողոված 1878-1898, մասն Ա, Վաղարշապատ, «Տպարան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի», 112 էջ:
6. Լէօ 1914, Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի (1838-1913), Թիֆլիզ, հրատ. Նոյն դպրոցի հոգաբարձութեան, տպարան Ն.Աղանեանի, Պոլից. 7, 692 էջ:
7. Կարապետ եպիսկոպոս 1914, Դոփեանք և Մելիք-Շահնազարեանք, Նյութեր հայ մելիքության մասին, պրակ. Բ, Էջմիածին, 233 էջ:
8. Հովսեփեան Գ. 1951, Հիշատակարանք ձեռագրաց, հ. Ա (Ե դարից մինչև 1250), Անթիլիաս, «Տպարան Կաթողիկոսության Հայոց Կիլիկիոյ», 1256 էջ:
9. Հարությունյան Մ. Գ. 2010, Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին, Ստեփանակերտ, ‹‹Դիզակ պլյուս››, 159 էջ:
10. Շահխաթունեանց Յովհ. եպիսկ. 1842, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, «Ի Ս. Կաթողիկէ Էջմիածին», 410 էջ:
11. Սմբատեանց Մ. 1904, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփղիս, «Մովսէս Վարդանեանց», 608 էջ :
12. Եգանեան Օ. 1971, Գանձասարի հայերեն ձեռագրերի հավաքածուն, «Էջմիածին››, N Դ, էջ 59-62:
13. Աբրահամյան Հ. 2017/ 2018, Շուշիի ինքնավարության հարցի շուրջ, ‹‹Գիտական ընթերցումներ›› (հոդվածների ժողովածու), էջ 4:
14. Հարությունյան Հ., 2015, *Շուշիի հայության կոտորածները (1919 թ. հունիս և 1920 թ. մարտ),* ‹‹Բանբեր Հայագիտության››, № 1, էջ 50-51:
15. Միքայէլեան Ա. 1923, Ղարաբաղի վերջին դեպքերը, ‹‹Հայրենիք››, N 12, էջ 121-122:
16. ԳԱԹ , ֆոնդ Ս. Քամալյանի, ց. 2, բաժին 44:
17. Ցուցակ գրչագիր Մատինից Սրբազան Սարգիս արք. Հասան-Ջալալեանցի, Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 228, վավ. 15:
18. ՄՄ, ձեռ. Հմր 7428, թ. 4ա:
19. ՄՄ, ձեռ. Հմր 8212, թ. 7ա:
20. Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. Հմր 166:
21. Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. Հմր 186:
22. Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. Հմր 279:
23. Էջմիածնի Ձեռագրատուն, ձեռ. Հմր 657:
24. «Էջմիածին», 1962, N 12, էջ 57-59:
25. «Էջմիածին», 1971, N 8, էջ 70:

Ամփոփում

Շուշիում մշակութային արժեքների ոչնչացումից փրկված՝ XVIII դարի վերջի – XIX դարի ձեռագրերը

Մարինե Հարությունյան

Այսպիսով՝ այս գիտական ուսումնասիրությունը հիմք է տալիս հանգելու այն եզրակացության, որ դարեր ի վեր Արցախում զարգացած է եղել գրչության արվեստը: Արցախի տարբեր վայրերում գործել են գրչության արվեստի նշանավոր կենտրոններ, որոնցից է Շուշիի գրչագրության կենտրոնը: Շուշիում ձեռագրական մշակույթը լայն թափ ստացավ XVIII դարի երկրորդ կեսից: Այստեղ գրվել և ծաղկազարդվել են մի շարք ձեռագրեր, որոնց մի մասը ոչնչացվել է արտաքին թշնամիների ասպատակությունների պատճառով:

Գիտական հոդվածում հիմնականում անդրադարձել ենք Շուշիում մշակութային արժեքների ոչնչացումից փրկված՝ XVIII դարի վերջի և XIX դարի ձեռագրերի ընդհանուր նկարագրությանը: Այս ձեռագրերը ներկայումս պահպանվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և Էջմիածնի ձեռագրատանը:

Հիմնաբառեր. *Մատենադարան, գրչություն, ձեռագիր, վանք, մանրանկար, նկարչություն, մշակույթ, ամրոց, եկեղեցի*

Резюме

Рукописи конца XVIII – XIX веков, спасенные от уничтожения культурных ценностей в Шуши

Марине Арутюнян

Таким образом, данное научное исследование приводит к выводу, что искусство письма в Арцахе развивалось веками. В разных районах Арцаха были известные центры письма, один из которых находился в Шуши. Рукописная культура развивалась в Шуши со второй половины XVIII века. Здесь был написан и раскрашен ряд рукописей, некоторые из которых были уничтожены нападениями внешних врагов.

В научной статье мы в основном представили общее описание рукописей конца XVIII и XIX веков, сохранившихся при уничтожении культурных ценностей в Шуши. Эти рукописи в настоящее время хранятся в Матенадаране имени Месропа Маштоца и в Доме рукописей Эчмиадзина.

Ключевые слова: *Матенадаран, письменность, рукопись, монастырь, миниатюра, живопись, культура, замок, церковь*

Abstract

Manuscripts of the late XVIII – XIX Centuries in Shushi Saved from the Destruction of Cultural Values

Marine Harutyunyan

Thus, this scientific study leads to the conclusion that the art of writing has been developed in Artsakh for centuries. There were famous centers of the art of writing in different regions of Artsakh and one of them was in Shushi. Manuscript culture developed in Shushi from the second half of the XVIII century. A number of manuscripts were written and decorated in Shushi some of which were destroyed by the invasions of external enemies.

In the scientific article, we have mainly referred to the general description of the manuscripts of the end of XVIII century and XIX century which were saved during the destruction of cultural values in Shushi. These manuscripts are currently kept in the Matenadaran after Mesrop Mashtots in Yerevan and in the Manuscript Library of Etchmiadzin.

Keywords: *Matenadaran, writing, manuscript, monastery, miniature, painting, culture, castle, church*